

Արի՛ «Այբ», իրագործի՛ր հավակնոտ գաղափարներ Ընդունում ենք Նախագծային ուսումնառության Նոր ակումբների գաղափարների / ղեկավարների հայտեր

Ունեք Նոր և հետաքրքիր գաղափարներ, ոլորտի գիտա՞լ եք, սիրո՞ւմ եք աշխատել աշակերտների հետ և ցանկանո՞ւմ եք ձեր փորձն ու գիտելիքը ներդնել լավագույն ապագայի կառուցման գործում՝ «Այբ»-ը հենց ձեր տեղն է: Մենք տալիս ենք հարթակ և ներուժ իրագործելու անիրագործելի «Այբ» ավագ դպրոցի աշակերտների հետ կարող եք կյանքի կոչել հետաքրքիր նախագծեր, լուծել այժմեական կարևոր խնդիրներ՝ տալով նրանց գիտելիք ու փորձ՝ ձևավորելով ԱյբՊՐՈ Նոր ակումբ և դառնալով դրա ղեկավար:



Ինչ է պիտք անել

Նախագծային ուսումնառության ակումբները ձևավորվում են ուսումնական տարվա սկզբում: Նախ ակումբի ղեկավարները «գրավում» են ապագա թիմակիցների հետաքրքրությունը՝ աշակերտական համայնքին ներկայացնելով իրենց ոլորտի գրավչությունն ու առավելությունները (pitching): Ապա աշակերտները քվեարկությամբ ընտրում են, թե որ ակումբին են ցանկանում անդամակցել: Այնուհետև ձևավորված ակումբը մշակում և «Այբ» ղեկավարների հավանությանն է ներկայացնում իրականացվելիք նախագիծը:

Ակումբի ղեկավարի պարտականությունն է «Այբ» ավագ դպրոցի 11-12-րդ դասարանի աշակերտների հետ մեկ ուսումնական տարվա ընթացքում իրականացնել մեծածավալ, երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը:



Անհրաժեշտ է՝

- աշակերտների հետ մշակել իրագործելի նախագծեր,
- կազմել բյուջե
- գտնել լուծման եղանակներ
- սահմանել ժամկետներ,
- համակարգել աշակերտական թիմի աշխատանքը

Ամեն ուսումնական տարի «Այբ» դպրոցում ձևավորվում են 10-ից ավելի ակումբներ՝ ռոբոտաշինությունից մինչև «Արվեստանոց», բիոինֆորմատիկայից՝ Crowdfunding: ԱյբՊՐՈ

ակումբները նախորդ տարիների ընթացքում ունեցել են հնչեղ արդյունքներ, մասնավորապես՝ «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտների մշակած բիոպլաստիկի պատրաստման եղանակը ստացել է [գյուտի արտոնագիր](#):

**Դասավանդման կամ ակումբների վարման փորձը ցանկալի է:*

Ուղակեք Ձեր ինքնակենսագրականը (CV), նախագծերի պորտֆոլիո (ցանկալի է), առաջարկվող նախագծի մասին տեղեկություն՝ նկարագրող նամակ, սահկահանդես pbl@aybschool.am էլ. հասցեին՝ subject դաշտում նշելով նախագծային ակումբ_Անուն Ազգանուն:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 5 օգոստոսի, 2021թ.:

Զբաղվածությունը՝ ոչ լրիվ զբաղվածություն:

Ինչ է ԱյբՊՐՈ-ն

Նախագծային ուսումնառությունը «Այբ» դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված «սովորել անելով» սկզբունքի վրա: Նախագծերի իրականացման արդյունքում զարգանում են աշակերտների մի շարք կարևորագույն հմտություններ, ինչպիսին են թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, հաղորդակցման հմտությունները, նախաձեռնողականությունը և այլն: Նախագծային ուսումնառության շրջանակում աշակերտները ընտրում են իրենց հոգեհարազատ ոլորտը, փորձում են սեփական ուժերը այդ ոլորտում, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս կողմնորոշվել ապագա մասնագիտության մեջ:



2020-2021 տարվա նախագծային ակումբներն են՝

Ինժեներական ակումբ. - «Սարտար» նախագիծ
https://aybschool.am/am/page/engineeringclub20_21

«Արվեստանոց» ակումբ. «Արտադաս» նախագիծ
https://aybschool.am/am/page/artstudio20_21

Ծրագրավորման ակումբ- «Բոլոլա» նախագիծ
https://aybschool.am/am/page/programming20_21

Մեդիագիտակներ ակումբ. «Մեդիագիտություն» նախագիծ
https://aybschool.am/am/page/mediagitakner20_21

Ռոքետար - «Made in Armenia» նախագիծ

https://aybschool.am/am/page/rockestr20_21

Ֆ8 ակումբ- «Բաց արվեստ» նախագիծ

https://aybschool.am/am/page/f820_21

Ուրբանիստ. «Ուսուցանող այգի»

https://aybschool.am/am/page/urbanist20_21

Տեխնոշարժ ակումբ- «Դեպի տուն» նախագիծ

https://aybschool.am/am/page/technomove20_21

Ֆիլմարտադրության ակումբ- «Թաքնված գանձերի հետքերով» նախագիծ

https://aybschool.am/am/page/filmfactory20_21

Այբպրես- «10/10 նախագիծ»

https://aybschool.am/am/page/aybpress20_21